

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե
Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 8/1

21 փետրվարի 2014 թ.

Քննարկվեց «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ 12.02.2014 թ-ի թիվ 39/02-07-60 գրությամբ բերված գանգատը ՀՀ ԿԱ ՊԵԿ Խոշոր հարկ վճարողների ՀՏ 23.12.2013 թ-ի թիվ 1013945 ստուգման ակտի դեմ:

Համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 13.04.2011 թ-ի թիվ 1013945 հանձնարարագրի «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ում (այսուհետ նաև Ընկերություն) կատարվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող ՀՀ օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ստուգում: Արդյունքում կազմվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ Խոշոր հարկ վճարողների ՀՏ 23.12.2013 թ-ի թիվ 1013945 ստուգման ակտը (այսուհետ նաև ստուգման ակտ), որի դեմ ընկերության կողմից ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե է ներկայացվել գանգատ: Ընկերության կողմից գանգատարկվում է միայն ստուգման ակտով շահութահարկի և ավելացված արժեքի հարկի գծով լրացուցիչ առաջադրված պարտավորությունները:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 13.10.2008 թ-ի թիվ 1002597 հանձնարարագրի Ընկերությունում կատարվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող ՀՀ օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ստուգում: Արդյունքում կազմվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ Արաբկիրի 1 ՀՏ 28.11.2008 թ-ի թիվ 1002597 ստուգման ակտը, որը վիճարկվում է վարչական դատավարության կարգով քննվող թիվ ՎԴ/0240/05/09 գործով և որի վերաբերյալ դեռևս չի ընդունվել վերջնական դատական ակտ:

Նշվեց նաև, որ ընկերության նկատմամբ կազմված ՀՀ ԿԱ ՊԵԿ Արաբկիրի 1 ՀՏ 28.11.2008 թ-ի թիվ 1002597 և ՀՀ ԿԱ ՊԵԿ Խոշոր հարկ վճարողների ՀՏ 23.12.2013 թ-ի թիվ 1013945 ստուգման ակտերով շահութահարկի և ավելացված արժեքի հարկի գծով լրացուցիչ պարտավորությունները, ըստ էության, առաջադրվել են միևնույն խախտումների համար:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի «ա» ենթակետի համաձայն. «Վարչական մարմինը պարտավոր է կասեցնել վարչական վարույթը, եթե՝ ա) անհնարին է տվյալ վարույթի արդյունքում ակնկալվող վարչական ակտի ընդունումը մինչև սահմանադրական, վարչական, քաղաքացիական կամ քրեական դատավարության կարգով քննվող գործով որոշում (դատական ակտ) կայացնելը»:

Ելնելով վերոգրյալից, ինչպես նաև ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի

«ա» ենթակետի դրույթներով՝ Հանձնաժողովը գտնում է, որ ընկերության գանգատի հիման վրա ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեում հարուցված վարչական վարույթը ենթակա է կասեցման, մինչև վարչական դատավարության կարգով քննվող թիվ ՎԴ/0240/05/09 գործով վերջնական որոշում (դատական ակտ) կայացնելը:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո թ ո շ ու մ է՝

«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ 12.02.2014 թ-ի թիվ 39/02-07-60 գրությամբ բերված գանգատի հիման վրա ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեում հարուցված վարչական վարույթը կասեցնել:

Հանձնաժողովի նախագահ



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ